



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

15.04.2025թ. ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

վարչական իրավախախտման վերաբերյալ

Թիվ ՎԻՎ/110/2025 գործով

ք. Երևան

15 ապրիլի 2025թ.

2025 թվականի ապրիլի 15-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ Լիլիթ Ալեքսանյանը (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանը և Արմեն Մարությանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Օրակարգում ներառված էր ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Գևորգի Հակոբյանի ընտանիքի անդամ Գևորգ Գարեգինի Հակոբյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ Հանձնաժողովի կողմից հարուցված թիվ ՎԻՎ/110/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը, վարույթի արդյունքների ամփոփումը և որոշման կայացումը:

Պատշաճ ծանուցված Գևորգ Հակոբյանը չէր ներկայացել գործի քննությանը:

Նիստը նախագահող Լ. Ալեքսանյանը ներկայացրեց, որ Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով՝

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Հակոբյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է Գևորգ Հակոբյանի գույքային դրությունը, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը, որի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվել է Հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝ Գևորգ Հակոբյանը պաշտոնատար անձի ընտանիքի անդամի 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) բանկային հաշիվների մնացորդներ հայտարարագրված չեն, մինչդեռ Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն Գևորգ Հակոբյանի բանկային հաշվի մնացորդները՝ 2023 թվականի տարեսկզբին կազմել է 6,530,550 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 6,764,567 ՀՀ դրամ:

Վարույթի մասնակից Գևորգ Հակոբյանը Հանձնաժողովին է ներկայացրել գրավոր պարզաբանում, որով հայտնել է հետևյալը. «Հայտնում եմ, որ ստացել եմ իմ 2023 թվականի հայտարարագրում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Ձեր կողմից ուղարկված 01/1338-25 գրությունը, որում նշվել է, որ ես պաշտոնատար անձի ընտանիքի անդամի 2023 թվականի հայտարարագրում բանկային հաշվի մնացորդներ չեմ հայտարարագրել, ուստի անհրաժեշտ է ներկայանալ հանձնաժողով արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու համար:

Վերոգրյալի վերաբերյալ ցանկանում եմ հայտնել, որ իմ բանկային հաշվին եղել են միայն իմ օրինական կարգով ստացված եկամուտները՝ աշխատավարձը, որ ես լրացրել եմ եկամուտներ դաշտում, իսկ հաշվի մնացորդներ դաշտում ոչինչ չեմ լրացրել, քանի որ ճիշտ չեմ տիրապետել հայտարարագրի լրացման կարգին, գիտեցել եմ, թե այդ դաշտում պետք է լրացնել այլ եկամուտների վերաբերյալ տեղեկություններ, որոնք ես չեմ ունեցել, կից կներկայացնեմ նաև իմ 2023 թվականի բանկային հաշվի քաղվածքը:

Բացի այդ ցանկանում եմ հայտնել, որ ներկա պահին հիվանդացել եմ [REDACTED]

[REDACTED] մեջ, կից կներկայացնեմ նաև իմ հիվանդության վերաբերյալ փաստաթղթերը:

Վերոգրյալով պայմանավորված խնդրում եմ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին լինել ներողամիտ, թույլ տրված թերության հարցում, քանի որ ես օբյեկտիվորեն վստահ եմ եղել, որ հաշվի մնացորդներ դաշտում պետք է լրացվեն այլ

եկամուտների մնացորդներ, որոնք ես չեմ ունեցել և այդ պատճառով չեմ դրանք լրացրել, խնդրում եմ ինձ վարչական պատասխանատվության չենթարկել, քանի որ վերոգրյալ անհամապատասխանություններում իմ մեղքը բացակայում է, դրանք պայմանավորված են եղել նշված հանգամանքների վերաբերյալ օբյեկտիվ պատճառներով տեղեկացված չլինելով: (...):»

Տվյալ պարագայում, Լ. Ալեքսանյանը և Ա. Մարությանը կարևոր են համարում այն, որ Գևորգ Հակոբյանի կողմից չհայտարարագրված դրամական միջոցների չափերը՝ 2023 թվականի տարեսկզբին՝ 6,530,550 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին 6,764,567 ՀՀ դրամ, գերազանցում են վերջինիս դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը, որն ըստ Հայտարարագրում ներկայացված տվյալների կազմում է ամսական 423,000 ՀՀ դրամ, քանի որ Հանձնաժողովը նվազ նշանակություն է գնահատում այն դեպքերը, երբ չհայտարարագրված ընդհանուր գումարի չափը չի գերազանցում հայտարարատու անձի դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը: Նշվածից հետևում է, որ առկա է հայտարարատու անձի նկատմամբ վարչական տույժ կիրառելու հիմքերը՝ արարքի էական նշանակություն ունենալու հիմքով, ուստի գտնում են, որ Գևորգ Հակոբյանի նկատմամբ պետք է կիրառել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական տույժը:

Հանձնաժողովի մյուս անդամը՝ Ա. Փաշինյանը, տարբերվող՝ առանձին դիրքորոշում հայտնեց, որ թեև բանկային հաշվի մնացորդները չհայտարարագրելով Գևորգ Հակոբյանը թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք, սակայն հաշվի առնելով այն, որ «Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտի կողմից տրամադրված էպիկրիզի համաձայն վերջինիս մոտ ախտորոշվել է [REDACTED]

[REDACTED], միևնույն ժամանակ, գնահատելով ընդհանուր գույքային դրության, ինչպես նաև դրամական խնայողությունների ռիսկայնությունը, մասնավորապես այն հանգամանքը, որ դրամական խնայողություններն ամբողջությամբ տնօրինվում են անկանխիկ եղանակով, ուստի սույն գործով հայտարարատու անձի կողմից թույլ տրված խախտումը կարելի է դիտարկել որպես նվազ նշանակության՝ Գևորգ Հակոբյանին հայտարարելով բանավոր դիտողություն:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների, շահերի բախման հարցերով, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություններ:

Հանձնաժողովի **իրավասությանը վերապահված այլ հարցերով** Հանձնաժողովն ընդունում է որոշումներ:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի եզրակացություններն ու որոշումներն **ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:**

Օրակարգում ներառված հարցի քննարկմամբ Հանձնաժողովն **արձանագրեց.**

Հանձնաժողովում 2025 թվականի ապրիլի 15-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության և մյուս նյութերի հիման վրա Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում, Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն ապահովված չլինելու հանգամանքով պայմանավորված, կոլեգիալ մարմնի կողմից քննվող վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/110/2025 գործով որոշում չի կայացվում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ